ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 726 – Ա 23 դեկտեմբերի 2021 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Եղիշե Մկրտչյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ
Դավիթ Սահակյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Բուրմունք Հովհաննիսյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբանի պարտականությունները ժամանակավորապես կատարող
Արամ Մուրադյան	-հանձնող
Միլենա Օսեպյան	-ընդունող
Վերա Կոլպակովա	-հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Մկրտչյան Եղիշե/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներինընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

23.12.2021

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 2710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ